ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ ԿԵՆՏԿՈՄԻ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏԸ՝ ՆՎԻՐՎԱԾ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՏ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ 150-ԱՄՅԱԿԻՆ

Ս. թ. հոկտեմբերի 14-ին Երևանի «Ռոսիա» կինոթատրոնում կայացավ Հայաստանի կոմկուսի կենտկոմի և Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հանդիսավոր նիստը՝ նվիրված Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման 150-ամյակին։

Նախագահությունում էին ՍՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի անդամ, ՍՍՀՄ պաշտպանության մինիստր, Սովետական Միության մարշալ Դ. Ֆ. Ուստինովը, Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Կ. Ս. Դեմիրճյանը, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Բ. Ե. Սարկիսովը, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆ. Տ. Սարգսյանը, Սովետական Միության մարշալ Հ. Ք. Բաղրամյանը, Հայաստանի կոմունիստական կուսակցության և Հայկական ՍՍՀ կառավարության մյուս ղեկավարները, Ռուսաստանի հետ Հայաստանի միավորման 150-ամյակի տոնակատարությանը մասնակցելու համար ժամանած եղբայրական հանրապետությունների, հերոս քաղաքներ Մոսկվայի, Լենինգրադի, Ռոստովի մարզի, Հունգարական ժողովրդական Հանրապետության Դյոր Շոպրոնի մարզի պատվիրակությունների ղեկավարները, կուսակցական, սովետական, արհմիութենական, կոմերիտական պատասխանատու աշխատողներ, արտադրության առաջավորներ, գիտության և կուլտուրայի գործիչներ, երկրի զինված ուժերի ներկայացուցիչներ։

Հանդիսավոր նիստը ներածական խոսքով բացեց Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Կ. Ս. Դեմիրճյանը։

Մեր սոցիալիստական հայրենիքի՝ ժողովուրդների մեծ եղբայրության երկրի, հանդեպ ունեցած հսկայական հպարտության զգացումով ենք մենք այսօր հավաքվել Հայաստանի կոմկուսի Կենտրոնական կոմիտեի և Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի հանդիսավոր նիստին՝ նվիրված Ռուսաստանի հետ Հայաստանի միավորման 150-ամյակին,— ասաց նա։— Մեկուկես դար առաջ տեղի ունեցավ մի իրադարձություն, որը նշանավոր ուղենիշ դարձավ հայ ժողովրդի պատմական ճակատագրում։ Արևելյան Հայաստանը միավորվեց Ռուսաստանի հետ։ Հայ ժողովուրդը մեկընդմիշտ իր բախտը կապեց ռուս մեծ ժողովրդի բախտի հետ։

Այդ պատմական ակտով հավիտյանս հավիտենից զոդվեց հայ և ռուս ժողովուրդների՝ դարերի խորքից եկող բարեկամությունը։ Օտար նվաճողների դեմ, սոցիալական արդարության համար, նոր աշխարհի համար համատեղ պայքարում կոփված և ամրապնդված բարեկամությունը մեծ Հոկտեմբերի հաղթանակի շնորհիվ իսկական եղբայրության վերաճեց սոցիալիզմի և կոմունիզմի մեծ իդեալների հաղթանակի համար մղվող պայքարում։

Ներկաների բուռն, երկարատև ծափահարությունների ներքո հանդիսավոր նիստի պատվավոր նախագահություն է ընտրվում ՍՄԿԿ կենտկոմի քաղբյուրոն՝ ՍՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ ընկեր Լեոնիդ Իլյիչ Բրեժնևի գլխավորությամբ։

Զայնը տրվում է ՍՄԿԿ կենտկոմի քաղբյուրոյի անդամ, ՍՍՀՄ պաշտպանության մինիստր, Սովետական Միության մարշալ Դ. Ֆ. Ուստինովին։

— Այսօր,— ասաց նա,— Հայկական ՍՍՀ աշխատավորները Ռուսաստանի Ֆեդերացիայի, սովետների երկրի եղբայրական բոլոր հանրապետությունների ժողովուրդների հետ նշում են մի փառավոր հոբելյան՝ Ռուսաստանի հետ Հայաստանի միավորման 150-ամյակը։

Թույլ տվեք Սովետական Միության կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի անունից հանրապետության բանվորներին, կոլտնտեսականներին, մտավորականությանը, բոլոր աշխատավորներին ջերմորեն շնորհավորել այդ նշանակալի իրադարձության առթիվ։

Խորին գոհունակության զգացումով ձեզ հաղորդում եմ ՍՄԿԿ կենտկոմի գլխավոր քար-

տուղար, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ ընկեր Լեոնիդ Իլյիչ Բրեժնևի արտագին ողջույնն ու ամենաջերմ բարեմաղթությունները։

Այս հոբելյանական օրերին մեր առջև առանձնահատուկ պարզորոշությամբ է կանգնում հայ ժողովրդի՝ դաժան փորձություններով լի բաղմադարյան պատմությունը, է՛լ ավելի վառ կերպով է բացահայտվում այն հսկայական նշանակությունը, որ նրա բախտի համար ունեցել է Ռուսաստանի հետ, եղբայրական ռուս ժողովրդի հետ միավորվելը։

Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորումը օտարների ասպատակություններից և ֆիզիկական ոչնչացման սպառնալիքից հայ ժողովրդի փրկության վճռական գործոնը եղավ, կարևորագույն դեր խաղաց նրա հետագա քաղաքական, սոցիալ-տնտեսական և կուլտուրական զարգացման ասպարեզում։

Ռուսաստանի ժողովուրդների բարեկամությունը կոփվում և կռվում էր սոցիալական և ազգային ազատագրության համար նրանց համատեղ պայքարում։ «Ցարական ինքնակալության դեմ Ռուսաստանի պրոլետարիատի պայքարի պատմական փորձը,— ասում է Լենինդ Իլյիչ Բրեժնևը,— Հայաստանի աշխատավորներին ցույց տվեց ազատության, սոցիալական առաջադիմության միակ ճշմարիտ ուղին, հեղափոխական պայքարի ուղին, սոցիալիստական վերափոխումների ուղին։ Այդ պայքարում Հայաստանի աշխատավոր ժողովրդի արմատական շահերը ի մի ձուլվեցին Ռուսաստանի բանվոր դասակարգի, բոլոր աշխատավորների շահերի հետ։

Հեղափոխական միասնական շարքով Լենինի շուրջը համախմբվեցին նաև հայ ժողովրդի լավագույն ներկայացուցիչները։ Նրա մերձավորագույն զինակիցները դարձան Սուրեն Սպանդարյանը, Բոգդան Կնունյանցը, Իսահակ Լալայանցը, Սիմոն Տեր-Պետրոսյանը (Կամո), Ալեքսանդր Մյասնիկյանը, Անաստաս Միկոյանը և շատ ուրիշներ։ Պրոլետարական ինտերնացիոնալիզմի խորհրդանիշն է դարձել լենինյան գվարդիայի ականավոր ներկայացուցիչ Ստեփան Շահումյանի պայծառ կերպարը, որը Բաքվի կոմունայի կազմակերպիչներից և ոգեշնչողներից մեկն էր, նրա ճանաչված ղեկավարը։

Հայաստանի աշխատավոր մասսաները խանդավառությամբ ընդունեցին մեծ Հոկտեմբերի հաղթանակի լուրը։ Նրանք վճռական պայքարի ելան հանուն սովետական իշխանության։ Հեղափոխական բանվորներն ու գյուղացիները 11-րդ բանվորա-գյուղացիական կարմիր բանակի օգնությամբ տապալեցին դաշնակների ռեակցիոն, ծախու վարչակարգը և հաստատեցին աշխատավորների իշխանություն։ Հայ ժողովուրդը ձեռք բերեց սոցիալիստական պետականություն։

Ընկ. Դ. Ֆ. Ուստինովը այնուհետև խոսեց եղբայրական միասնական ընտանիքում ՍՍՀՄ ժողովուրդների համախմբման շնորհիվ նրանց ստեղծագործական ուժերի ծաղկման, ինտերնացիոնալ բարեկամության մեծ ուժի մասին, որը դրսևորվել է ինչպես սոցիալիստական շինարարության ընթացքում, այնպես էլ Հայրենական մեծ պատերազմի տարիներին։

Հերոսական սովետական բանակի շարքերում և պարտիզանական ջոկատներում, մեր բոլոր հանրապետությունների ներկայացուցիչների հետ ուս-ուսի տված, կռվում էին հարյուր-հազարավոր հայ ռազմիկներ, ցույց տալով արիության և քաջության օրինակներ։ Նրանցից մոտավորապես 70 հազարը պարգևատրված են մարտական շքանշաններով ու մեդալներով, 103-ը արժանացել են Սովետական Միության հերոսի բարձր կոչման։ Որպես տաղանդավոր զորապետներ իրենց դրսևորեցին փառաբանված մարշալ, Սովետական Միության կրկնակի հերոս Հ. Ֆ. Բաղրամյանը, Սովետական Միության հերոսներ՝ Սովետական Միության նավատորմի ծովակալ՝ Հ. Ս. Իսակովը և զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ Հ. Խ. Բաբաջանյանը, ավիացիայի մարշալ Ս. Ա. Խուդյակովը և հայ ժողովրդի ուրիշ հիանալի զավակներ։

Իր ճառում ՍՍՀՄ պաշտպանության մինիստրը մեծ տեղ հատկացրեց ետպատերազմյան խաղաղ տարիներին սովետական ժողովրդի ձեռք բերած մեծագույն նվաճումներին։

Անդրադառնալով սովետական իշխանության տարիներին տնտեսության, գիտության և կյանքի մյուս ասպարեզներում Սովետական Հայաստանի ձեռք բերած աննախընթաց նվաճումներին, ընկ. Դ. Ֆ. Ուստինովը նշեց, որ Հայկական ՍՍՀ-ի օրինակով վառ կերպով երևում է մեր կուսակցության հոգատարությունը աշխատավոր մարդու, նրա բարեկեցության աճի, հոգևոր համակողմանի զարգացման մասին։ Այն ժողովուրդը, որի համար հեղափոխությունից առաջ ասում էին, թե նա անհետանալու է պատմության ասպարեզից, այժմ արժանավայել տեղ է գրավում կոմունիզմի ռահվիրաների շարքերում։

Սովետական Միությունը հարյուրից ավելի ազգություններ պատկանող ավելի քան քառորդ միլիարդ ազատ և իրավահավասար մարդկանց հարազատ տունն է։ Եվ միանգամայն օրինաչափ է, որ հայ ժողովրդի այսօրվա տունը մեր սոցիալիստական ինտերնացիոնալ տունն է։ Մենք այն նշում ենք ՍՄԿԿ XXV հա-

մագումարի որոշումների, տասներորդ հնգամյակի առաջադրանքների կատարման համաժողովրդական պայքարի պայմաններում։

ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեն, անձամբ Լեոնիդ Իլյիչ Բրեժնևը, խոր հետաքրքրություն և մշտական հոգատարություն են ցուցաբերում ձեր հանրապետության գործերի նկատմամբ։ Ուշադրությամբ քննարկվում և ժամանակին լուծվում են հասունացած հարցերը։

ՍՍՀՄ պաշտպանության մինիստր, Սովետական Միության մարշալ Դ. Ֆ. Ուստինովը իր ճառում անդրադարձավ նաև միջազգային լարվածության թուլացումը խորացնելու և ամրապնդելու հարցերին։ Նա մասնավորապես ասաց, որ, միջազգային ասպարեզում հանդես գալով որպես խաղաղության հուսալի պատվար և դրոշակակիր, Սովետական Միությունը Հոկտեմբերի ճանապարհով հաստատակամորեն և վստահորեն է առաջ ընթանում դեպի մեծ նպատակը՝ կոմունիզմը։

Ընկ. Դ. Ֆ. Ուստինովը այնուհետև հրապարակում է ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը Հայկական ՍՍՀ-ն Լենինի շքանշանով պարգևատրելու մասին։ Բուռն, երկար չլռող օվացիայի ներքո նա Լենինի շքանշանը ամրացնում է Սովետական Հայաստանի դրոշին, մեկ անգամ ևս ի սրտե շնորհավորում է հանրապետության բոլոր աշխատավորներին Ռուսաստանի հետ Հայաստանի միավորման 150-ամյակի և Հայկական ՍՍՀ-ն Լենինի շքանշանով պարգևատրելու առթիվ։

Ռուսաստանի հետ Հայաստանի միավորման 150-ամյակի մասին զեկուցումով հանդես է գալիս Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Ս. Դեմիրճյանը։

— Հենց նոր մենք ձեզ հետ մեկտեղ դարձանք պատմական ակտի վկաներն ու մասնակիցները,— ասաց նա։ Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության դրոշին ամրացվեց սովետական պետության բարձրագույն շքանշանը՝ Լենինի շքանշանը։

Հայկական ՍՍՀ-ի պարգևատրումը մեր պետության բարձրագույն շքանշանով, ՍՄԿԿ Կենտկոմի, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի ողջույնը՝ հայ ժողովրդի նկատմամբ կոմունիստական կուսակցության և սովետական պետության հսկայական հոգատարության ևս մի վառ դրսևորում է, ՍՄԿԿ-ի լենինյան իմաստուն ազգային քաղաքականության հետևողական իրականացման համոզիչ վկայությունը։

Սոցիալիստական և կոմունիստական շինարարության ասպարեզում ձեռք բերած իրենց բոլոր հաջողություններով, էկոնոմիկայի և կուլտուրայի ծաղկմամբ, իրենց հինավուրց հողի վրա ստեղծված հիասքանչ նորոգ կյանքով, ծաղկուն քաղաքներով ու գյուղերով, խաղաղ աշխատանքի երջանկությամբ ու բերկրանքով, վաղվա օրվա նկատմամբ իրենց վստահությամբ այս ամենով հանրապետության աշխատավորները, ամբողջ հայ ժողովուրդը պարտական են կոմունիստների հարազատ կուսակցությանը։ Այն կուսակցությանը, որը մեր երկիրը ճշմարիտ ճանապարհով, լենինյան կուրսով տարել է և տանում է հաղթանակից հաղթանակ, այն կուսակցությանը, որը սովետական ժողովրդի փորձված առաջնորդն է, մեր մեծ հայրենիքի ժողովուրդների եղբայրական անխախտ բարեկամության ցեմենտող ուժը։

Ընկ. Կ. Ս. Դեմիրճյանը նշեց, որ Սովետական Հայաստանի աշխատավորները պանծալի հոբելյանը՝ Ռուսաստանի հետ Հայաստանի միավորման 150-ամյակը, տոնում են որպես սովետական ժողովուրդների ինտերնացիոնալ բարեկամության ու եղբայրության մեծ ու պայծառ տոն, նշում են ՍՄԿԿ XXV համագումարի որոշումների հաջող կատարման համար պայքարի ուժեղացման, ռուս մեծ ժողովրդի, մեր հայրենիքի բոլոր ժողովուրդների հետ հայ ժողովրդի անխախտ բարեկամության հետագա ամրապնդման, սովետական հայրենասիրության և ինտերնացիոնալիզմի վեհ զգացմունքի խորացման նշանաբանով, հարազատ կոմունիստական կուսակցության, նրա լենինյան Կենտրոնական կոմիտեի շուրջը կուռ համախմբվածության նշանաբանով։

Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորումը, ասաց նա, բախտորոշ իրադարձություն եղավ հայ ժողովրդի պատմական ճակատագրում։ Նա ոչ միայն հայ ժողովրդին փրկեց ֆիզիկական իսպառ ոչնչացման սպառնալիքից, այլև կանխորոշեց նրա սոցիալ-տնտեսական, քաղաքական և կուլտուրական զարգացման հետագա ամբողջ առաջադիմական ընթացքը, նրան հնարավորություն տվեց հաղորդակցվելու ռուսական առաջավոր կուլտուրայի, համադեմոկրատական և մարքսիստական գաղափարների, համառուսաստանյան հեղափոխական շարժման, լենինյան կուսակցության մեծ գործի հետ, ներգրավվելու այն պատմական պրոցեսի մեջ, որը մեծ Հոկտեմբերի հաղթանակի և Հայաստանում սովետական իշխանության հաստատման շնորհիվ նրան հասցրեց իսկական սոցիալական ազատագրման և ազգային վերածննդի։

Մեր ժողովուրդը մեկուկեսդարյա հոբելյանը դիմավորում է հոգևոր ուժերի լիակատար ծաղկմամբ, սոցիալիստական և կոմունիստական շինարարության տարիներին հսկայական հաջողությունների հասնելով կյանքի բոլոր աս-

պարեզներում՝ մեր հայրենիքի ժողովուրդների եղբայրական միասնական ընտանիքում։

Զեկուցողն այնուհետև անդրադարձավ Ռուսաստանի հետ Հայաստանի միավորումից առաջ հայ ժողովրդի ծանր կացությանը, ազգային-ազատագրական շարժման և հայերի ռուսական կողմնորոշման պատմությանը, որոնք հող նախապատրաստեցին Արևելյան Հայաստանը օտար լծից ազատագրելու համար։

Նենգ հակառակորդի դեմ մղված ճակատամարտերում ռուսական զորքերը մարտական բարձր ոգի և բացառիկ հերոսություն ցուցադրեցին, պատմության մեջ գրեցին արիության ու խիզախության անմար էջեր, շարունակեց նա։ Հայաստանի ազատագրության ճակատամարտերում իրենց մարտական քաջությամբ ու խիզախությամբ հատկապես աչքի ընկան ռուս հեղափոխականների առաջին սերընդի ներկայացուցիչները՝ Կովկաս աքսորված դեկաբրիստները։ Նշելով պանծալի հոբելյանը, մենք այսօր հիացմունքով ենք վերհիշում դեկաբրիստների մարտական գործերը, որոնց սխրանքը, ինչպես որ Հայաստանի ազատագրության համար մարտնչած հազարավոր զինվորների սխրանքը հայ ժողովրդի հիշողության մեջ առհավետ անմահություն է նվաճել, դարձել Հայաստանի ճակատագրի նկատմամբ ռուս ժողովրդի իսկական եղբայրական ուշադրության ամենահոյակապ էջերից մեկը։ Իր սրտում սրբությամբ պահպանելով ռուս ազատարարների, ընկած հերոսների հիշատակը, երախտապարտ հայ ժողովուրդը նրանց պատվին արձաններ և հուշակոթողներ է կանգնեցրել։

Ռուսաստանի կազմում Արևելյան Հայաստանը ձգողական կենտրոն դարձավ ի սփյուռս աշխարհի ցրված հայերի համար, դարձավ նրանց կենտրոնացման, հետագա ազգահավաքման կենտրոն։

Հայ ժողովրդին, ինչպես որ մեր երկրի բոլոր ժողովուրդներին իսկական սոցիալական և ազգային ազատագրություն բերեց սովետական իշխանությունը։ Հոկտեմբերյան հեղափոխությունը, սովետական իշխանությունը հայ ժողովրդին տվեցին սոցիալիստական պետականություն, նրան դարձրին ծաղկուն սոցիալիստական ազգ, տվեցին խաղաղ աշխատանքի երջանկություն, կյանքի բերկրանք՝ սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում։

Ռուսաստանի հետ Հայաստանի միավորման 150-ամյակի տոնակատարությունը հանրապետության աշխատավորների մեջ առաջ է բերել քաղաքական և աշխատանքային հսկայական խանդավառություն, ստեղծագործական թարմ ուժերի հորձանք՝ սոցիալ-տնտեսական առաջադիմության նոր բարձունքների համար մղվող պայքարում։ Դրա արտահայտությունն են աշխատանքային այն հոյակապ հաղթանակները, որոնցով Հայաստանի աշխատավորները դիմավորեցին ինտերնացիոնալ բարեկամության և եղբայրության մեր այսօրվա տոնը։

Սովետական Հայաստանի աշխատավորները, վերջում ասաց Կ. Ս. Դեմիրճյանը, արտահայտելով իրենց անսահման նվիրվածությունը Լենինի անմահ գաղափարներին, Հոկտեմբերի գործին, ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների լենինյան բարեկամության պայծառ իդեալներին այս հանդիսավոր օրը Սովետական Միության հարազատ կոմունիստական կուսակցությանը հավաստիացնում են, որ իրենք այսուհետև ևս կամրապնդեն ժողովուրդների միասնությունն ու եղբայրությունը, ուժ ու եռանդ չխնայելով կպայքարեն կոմունիստական շինարարության հոյակապ պլանների կենսագործման համար, արժանի ավանդ կմուծեն մեր սիրելի սոցիալիստական հայրենիքի հետագա բարգավաճման և ամրապնդման գործում։

Հանդիսավոր նիստում ելույթ ունեցան ՌՍՖՍՀ-ի Գերագույն սովետի նախագահության նախագահ Ս. Ա. Ցասեռվը, ՍՄԿԿ Մոսկվայի քաղկոմի քարտուղար Ռ. Ֆ. Դեմենտևան, ՍՄԿԿ Լենինգրադի քաղկոմի առաջին քարտուղար Ցու. Ֆ. Սոլովյովը, Ուկրաինայի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Ցա. Պ. Պոզդեբայսկը, Բելոռուսական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Տ. Ցա. Կիսելյովը, Ուզբեկստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Ա. Ռ. Ռալիմովը, Ղազախստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Ս. Ն. Խմաշևը, Վրաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Է. Ա. Շևարդնաձեն, ՍՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի անդամության թեկնածու, Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Հ. Ա. Ալիևը, Լիտվական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ա. Ս. Բարկաուսկասը, Մոլդավիայի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Ի. Պ. Կալինը, Լատվիական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Պ. Ցա. Ստրաուտմանիսը, Կիրգիզական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ս. Ի. Իրուսիմովը, Տաջիկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Մ. Խոյովը, Թուրքմենական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ա.-Մ. Կլիչևը, Էստոնական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Վ. Ի. Կլաուզոնը, Ռոստովի մարզգործկոմի նախագահ Ս. Ն. Սարաճեևը, Հունգարիայի Դյոր Շոպրոնի մարզկոմի քարտուղար Ցա. Խորվարը։ Նրանք ջերմորեն և ի սրտե շնորհավորեցին հայ ժողովրդին, հանրապետության բոլոր աշ-

խատավորներին պանծալի հորելյանի՝ Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միավորման 150-ամյակի և հանրապետությունը Լենինի շքանշանով պարգևատրելու առթիվ, նրանց մաղթեցին աշխատանքային նոր մեծագործություններ ի փառս սովետական սոցիալիստական հայրենիքի։

Հանդիսավոր նիստի մասնակիցները մեծ ողջույնով ընդունեցին ողջույնի նամակ՝ ուղղված ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեին, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությանը, ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին, ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության նախագահ ընկեր Լեոնիդ Իլյիչ Բրեժնևին։

Նպրատակման խոսքով հանդես եկավ ընկ. Կ. Ս. Դեմիրճյանը։ Նա Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության. հանրապետության Մինիստրների խորհրդի անունից, հանրապետության աշխատավորների, ամբողջ հայ ժողովրդի անունից եղբայրական սովետական հանրապետությունների ներկայացուցիչներին, հանդիսությունների մասնակցող բոլոր հյուրերին խոր ու սրտագին շնորհակալություն հայտնեց Հայաստանի աշխատավորների հասցեին ասված ջերմ խոսքերի և բարեմաղթությունների համար։

Կ. Ս. Դեմիրճյանը Սովետական Միության կոմունիստական կուսակցությանը, նրա մարտական շտաբին՝ Լենինյան Կենտրոնական կոմիտեին, ընկեր Լեոնիդ Իլյիչ Բրեժնևի գլխավորած Կենտրոնական կոմիտեի քաղբյուրոյին հավաստիացրեց, որ Հայաստանի կոմունիստները, աշխատավորները, ամբողջ հայ ժողովուրդը բոլոր ուժերը կմոբիլիզացնեն կուսակցության հոյակապ կանխագծումների, կոմունիստական շինարարության բոլոր պլանների ու խնդիրների իրականացման համար, անձնվիրաբար կաշխատեն հանուն մեր մեծ սոցիալիստական հայրենիքի հզորության ամրապնդման և նրա հետագա համակողմանի ծաղկման։

Հանդիսավոր նիստը՝ նվիրված Ռուսաստանի հետ Հայաստանի միավորման 150-ամյակին, վերածվեց հայ և ռուս ժողովուրդների, Սովետական Միության բոլոր ժողովուրդների ինտերնացիոնալ բարեկամության, եղբայրության և միասնության, Սովետական Միության կոմունիստական կուսակցության շուրջը կուռ համախմբվածության վառ, անմոռաց ցույցի։

ՍՍՀՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

Սեպտեմբերի 21—26-ը տեղի ունեցավ ՍՍՀՄ ԳԱ և ՀՍՍՀ ԳԱ միացյալ հոբելյանական գիտական նստաշրջանը, նվիրված Արևելյան Հայաստանը Ռուսաստանի հետ միանալու 150-ամյակին։ Նստաշրջանի բացմանը ներկա էին **Կ. Ս. Դեմիրճյանը, Ֆ. Տ. Սարգսյանը, Գ. Գ. Անիսիմովը, Կ. Լ. Դալլաքյանը, Վ. Բ. Ղալումյանը, Հ. Մ. Ռսկանյանը,** ՍՍՀՄ ԳԱ պրեզիդենտ **Ա. Պ. Ալեքսանդրովը,** ՍՍՀՄ ատոմային էներգիայի օգտագործման պետական կոմիտեի նախագահ **Ա. Մ. Պետրոսյանցը,** ՍՍՀՄ ԳԱ փոխպրեզիդենտներ **Վ. Ա. Կոտելնիկովը, Պ. Ն. Ֆեդոսեևը, Ե. Պ. Վելիխանովը,** ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալներ **Ա. Մ. Կիրակոսյանը, Կ. Հ. Ղամբարյանը, Ռ. Ք. Սվետլովան,** ՍՍՀՄ ԳԱ և ՀՍՍՀ ԳԱ նախագահության անդամներ, եղբայրական հանրապետությունների գիտությունների ակադեմիաների ղեկավար գործիչներ, սովետական ականավոր գիտնականներ։

Միացյալ գիտական նստաշրջանի աշխատանքներին հանրապետության գիտնականների հետ միասին մասնակցում էին մեր երկրի գիտական կենտրոնները ներկայացնող բազմաթիվ անվանի պատմաբաններ, փիլիսոփաներ, գրականագետներ։ Նստաշրջանը ներածական խոսքով բացեց ՍՍՀՄ ԳԱ պրեզիդենտ Ա. Պ. Ալեքսանդրովը։

ՀԿԿ Կենտկոմի և հանրապետության կառավարության անունից նստաշրջանի մասնակիցներին ողջունեց ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ **Ֆ. Տ. Սարգսյանը։** Նա ասաց, որ մեր ժողովուրդը խորին երախտագիտությամբ և ուրախությամբ է նշում այն պատմական իրադարձության 150-ամյակը, երբ Արևելյան Հայաստանը մտավ Ռուսաստանի կազմի մեջ՝ իր բախտը առհավետ կապելով ռուս մեծ ժողովրդի հետ։ Դրանից հետո հայ ժողովրդի կյանքի 150-ամյա կենսափորձը, պատմական դեպքերի հետագա ողջ զարգացումը նոր ուժով հաստատեցին այն